

Գագիկ Ղազինյան
*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ քղթակից-անդամ*

Արման Թաթոյան
*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի
ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու*

**ՄԻՆԶԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ՝ ԸՍՏ ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ**

Յուրաքանչյուր երկրում գոյություն ունեցող քրեադատավարական հարաբերությունների համակարգը այն օբյեկտիվ հիմքն է, որի վրա զարգանում է քրեական դատավարության իրավունքը: Ինչպես ամբողջ քրեադատավարական օրենսդրության, այնպես էլ դրա առանձին ինստիտուտների իմաստավորումը և կատարելագործումը օբյեկտիվորեն անհնար է առանց դրանց պատմական արմատները հաշվի առնելու: Սակայն յուրաքանչյուր ոլորտի իրավական կարգավորում կամայական գործընթաց չէ, այլ այն միշտ պետք է հաշվի առնի կամ արտահայտի տվյալ ժամանակահատվածում հասարակական կյանքի օբյեկտիվ իրողությունները: Դա հատկապես կարևորվում է Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների այս փուլում քրեադատավարական նոր օրենսդրության մշակման և ձևավորման աշխատանքներն իրականացնելիս:

Այս առումով ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի համակարգային գաղափարախոսությանն առնչվող, մի շարք դեպքերում դրա ներքին տրամաբանությունը խախտող փոփոխությունները, ինչպես նաև հասարակական հարաբերությունների մշտական զարգացումը հանգեցրել են այնպիսի իրավիճակի, որի պայմաններում 1998 թվականի օրենսգիրքն իր փիլիսոփայությամբ և տրամաբանությամբ, կառուցվածքով և ներուժով, ինտեգրված և չինտեգրված ինստիտուտներով, առաջադիմական և ոչ արդիական դրույթներով, խայտաբղետ և հակասական պրակտիկայով օբյեկտիվորեն ի վիճակի չէ համապարփակ կարգավորման ենթարկել քրեական գործերի քննության և լուծման ընթացակարգը,

այդ գործընթացի շրջանակներում ապահովել հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը, հետևաբար, և քրեական դատավարության խնդիրների լուծումն ու նպատակների նվաճումը:

Ուստի, ներկայում առկա են բոլոր այն օբյեկտիվ նախադրյալները (իրավական, տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլն), որոնց ամբողջությունը թույլ է տալիս խոսել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի մշակման անհրաժեշտության մասին: Ըստ այդմ, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգն (այսուհետ՝ Հայեցակարգ) արձանագրել է, որ անցած տասնամյակի ընթացքում ունեցած արդյունքների ամփոփման, քաղած դասերի վերլուծության և թույլ տրված սխալների ուղղման տրամաբանական ավարտը պետք է լինի հայեցակարգային հիմքերի վրա դրված, գիտատեսական հիմնավորումներով հագեցած և գործնական փորձով ամրապնդված քրեական դատավարության նոր օրենսգրքի մշակումն ու ընդունումը: Գրանով հանդերձ, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության պահանջները և ՀՀ միջազգայնորեն ստանձնած պարտավորությունները, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մշակման հիմքում պետք է ընկած լինի **երկու հիմնարար չափանիշ՝ համարձակ նորարարությունը և չափավոր պահպանողականությունը**: Այն առաջին հերթին ընկալվում է որպես ՀՀ քրեադատավարական օրենսդրության զարգացման հաջորդ փուլում կիրառվելիք գաղափարների, ինստիտուտների փորձարկման (ապրոբացիայի) միջոց: Այս առումով Նախագծի մշակումը դիտարկվում է որպես ՀՀ քրեադատավարական օրենսդրության բնականոն զարգացման յուրահատուկ փուլ, ինչը պետք է հնարավորություն ընձեռի խուսափել թռիչքաձև ցնցումներից և ապահովել համեմատաբար ավելի սահուն անցում մեկ համակարգից մյուսին (Հայեցակարգի 1.13-1.14-րդ կետեր):

Այս համատեքստում առանձնակի կարևորություն է ստանում այն հարցը, թե ՀՀ քրեական դատավարության ապագա օրենսգրքում ինչպիսի իրավական կարգավորում է ստանալու մինչդատական վարույթը: Նախագծի հիմքում ընկած հայեցակարգային հիմնարար մոտեցման համաձայն՝ ՀՀ քրեադատավարական համակարգը պետք է ընթանա մինչդատական վարույթի պարզեցման, հնարավորինս բեռնաթափման ուղիով: Գրա վերջնական նպատակն է մեր երկրում ներդնել դատարանակենտրոն դատավարության համակարգ: Իհարկե, այդ համակարգին անցումը, ինչպես արդեն նշել ենք, պետք է լինի աստիճանական՝ առանց

վնասելու քրեական դատավարության զարգացման կոնկրետ ժամանակահատվածում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության կառուցակարգերը: Այդ առնչությամբ Նախագծի ընդունումը դիտվում է որպես անցումային փուլ՝ վերը նշված վերջնական նպատակին հասնելու ճանապարհին: Ուստի, այդ տեսանկյունից սույն ուսումնասիրության շրջանակներում կներկայացվեն ապագա օրենսգրքում մինչդատական վարույթի հետ կապված հայեցակարգային հիմնական մոտեցումները և դրանցով պայմանավորված օրենսդրական առաջարկվող լուծումները:

Նկատի ունենալով վերը շարադրված հայեցակարգային մոտեցումը՝ Նախագծում մինչդատական վարույթի նպատակ է համարվում հանրային մեղադրանքի գործերով պարզել հանցագործության հատկանիշները, հայտնաբերել հանցանք կատարած անձին, նրա նկատմամբ հարուցել քրեական հետապնդում, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն կատարելու միջոցով ստեղծել քրեական վարույթը դատարանում քննելու և լուծելու համար անհրաժեշտ նախադրյալներ ու պայմաններ, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հաստատել քրեական հետապնդման ենթարկված անձի անմեղությունը կամ քրեական վարույթը շարունակելու անհնարինությունը:

Ըստ այդմ, մինչդատական վարույթի բովանդակությունը կազմող իրավահարաբերությունների և գործողությունների ամբողջությունը պետք է ապահովեն քննության օպերատիվությունը, արագությունն ու արդյունավետությունը, ինչը ենթադրում է դատավարական գործառույթների հստակ տարանջատում՝ անձի իրավունքների և ազատությունների առավելագույն պահպանման պայմաններում:

Վերոգրյալի հիման վրա սահմանված է, որ մինչդատական վարույթն իրականացվում է նախաքննության միջոցով: Հետաքննությունը կոչված է օժանդակել նախաքննության առջև դրված խնդիրների լուծմանը: Նախաքննությունն ու հետաքննությունը գտնվում են դատախազական հսկողության, իսկ մինչդատական վարույթն ամբողջությամբ՝ դատական վերահսկողության ներքո:

Նախաքննությունը սկսվում է հանցագործության մասին հաղորդում ստանալու պահից և ավարտվում քրեական վարույթը դատարան ուղարկելով կամ այն կարճելով: Նախաքննության բովանդակությունը մինչդատական վարույթի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ գործողությունների կատարումն է և որոշումների ընդունումը:

Համաձայն Հայեցակարգի՝ **նոր օրենսգրքի բնութագրական գծերից է այն, որ վերացվել է քրեական գործի հարուցման (նյութերի նախապատրաստման) փուլը:** Այն ներառվել է նախաքննության, որպես մինչ-դատական վարույթի իրականացման միակ եղանակի, բովանդակության մեջ:

Նախաքննություն կատարելու բացառիկ լիազորությունը պատկանում է քննիչին, որով նա իրացնում է իր քննության գործառույթը: Նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության պայմաններում քննիչն օժտված է հարաբերական դատավարական ինքնուրույնությամբ. նա որոշում է գործի քննության ընթացքը, ինքնուրույն ընդունում է որոշումներ և կատարում գործողություններ, ինչպես նաև իրավասու է դատախազի հանձնարարությունները կամ որոշումները բողոքարկել վերադաս դատախազին՝ օրենքով նախատեսված դեպքերում կասեցնելով դրանց կատարումը կամ առանց դրանց կատարումը կասեցնելու:

Նախաքննությունն իրականացվում է երկու ձևով՝ ընդհանուր և պարզեցված կարգով: Ընդհանուր կարգով իրականացվում են ծանր և առանձնապես ծանր բոլոր հանցագործությունների վերաբերյալ վարույթները, ինչպես նաև միջին ծանրության առանձին հանցագործությունների վերաբերյալ վարույթները: Պարզեցված նախաքննության կարգով իրականացվում են ոչ մեծ ծանրության բոլոր հանցագործությունների, ինչպես նաև միջին ծանրության առանձին հանցագործությունների վերաբերյալ վարույթները:

Պարզեցված նախաքննության առանձնահատկությունն այն է, որ այստեղ ապացուցման առարկան նեղացվում է: Այն ներառում է միայն հանցակազմի հատկանիշները և անձի առնչությունը հանցագործությանը: Ապացուցման առարկան կազմող մյուս հանգամանքները հաստատվում են դատարանում: Իհարկե, դա չի նշանակում, որ նշված իրավակարգավորումները կարող են իրականացվել մինչդատական վարույթի ընթացքում անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման երաշխիքների հաշվին:

Նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացությունը (պարզեցված նախաքննության դեպքում՝ մեղադրական ակտը) դատախազին ուղարկելով կամ քրեական վարույթը կարճելու մասին որոշում կայացնելով:

Հետաքննությունը մինչդատական վարույթում նախաքննության ընթացքում կիրառվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների, գաղտնի քննչական գործողությունների և դրանց հետ կապված իրավահարաբերությունների ամբողջությունն է: Հետաքննության նպատակն է նպաստել մինչդատական վարույթի խնդիրների լուծմանը, օժանդակել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննություն կատարելուն: Հետաքննության մարմինը կատարում է նաև դատարանի հանձնարարությունները:

Համաձայն Նախագծի ընդհանուր մասի¹, հետաքննության մարմինը օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավարն (հետաքննության մարմնի պետ) ու աշխատակիցներն են (հետաքննիչ), որոնք քննիչի հանձնարարությամբ իրավասու են մինչդատական վարույթի շրջանակներում կատարելու օպերատիվ-հետախուզական միջոցառումներ և գաղտնի քննչական գործողություններ: Այլ կերպ՝ օպերատիվ-հետախուզական գործունեությունը ինկորպորացվել է քրեական դատավարության օրենսգիրք՝ այն նույնացնելով հետաքննության հետ:

Օպերատիվ-հետախուզական գործունեությունը քրեական դատավարության օրենսգիրք ինկորպորացնելը և քրեական վարույթի ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման գործընթացը հետաքննություն անվանելը նպատակ է հետապնդում այն դարձնել ավելի կանխատեսելի և կարգավորված, ինչպես նաև ներառել դատախազական հսկողության տիրույթ, ինչը քրեական ընթացակարգի շրջանակներում անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման կարևոր գրավական է:

Քրեական վարույթի ընթացքում հետաքննությունը կատարում են այն մարմինները, որոնք օրենքով իրավասու են իրականացնել օպերատիվ-հետախուզական գործունեություն: Վերջինս դատավարական բնույթ կարող է ստանալ միայն նախաքննություն կատարող անձի՝ քննիչի նախաձեռնությամբ, երբ նա նախաքննության խնդիրներից ելնելով համապատասխան հանձնարարություններ է տալիս օպերատիվ-հետախուզական գործունեություն (հետաքննություն) կատարող մարմիններին կամ անձանց:

¹ Տե՛ս <http://moj.am/hy/draft-legal-acts/page/1/>:

Հետաքննության շրջանակներում քննիչի հանձնարարությամբ իրականացվող առանձին օպերատիվ-հետախուզական միջոցառումները համարվում են գաղտնի քննչական գործողություններ (օրինակ՝ հեռախոսային խոսակցությունները լսելը, նամակագրությունը վերահսկելը, ներքին դիտումը և այլն), որոնց արդյունքները ապացուցողական նշանակություն են ստանում միայն դատավարական բոլոր երաշխիքների ապահովման պայմաններում (դատարանի որոշում, քննիչի գրավոր հանձնարարություն, օրենքով սահմանված ընթացակարգ և այլն):

Հետաքննության ծավալները սահմանափակված են մինչդատական վարույթի շրջանակներով: Հետաքննությունը կարող է իրականացվել միայն նախաքննությունը սկսելուց հետո և ինքնըստինքյան վերջանում է նախաքննության ավարտով:

Հետաքննության օրինականության նկատմամբ իր հսկողական լիազորությունն իրացնելիս դատախազն իրավասու է ստուգել գաղտնի քննչական գործողությունների (օպերատիվ-հետախուզական միջոցառումների) իրականացման հիմքերը, պայմանները և կարգը: Սակայն դատախազական հսկողության օբյեկտ չեն հանդիսանում օպերատիվ գործունեության մեթոդները և հնարքները (օրինակ՝ գործակալների հավաքագման ձևերը, նրանց վերաբերյալ տվյալները, ստացված տեղեկատվության մշակումը և այլն):

Քրեական հետապնդման հարուցումը: Հայեցակարգում առանձնակի տեղ է հատկացված դատախազի՝ քրեական հետապնդման հարուցման լիազորության իրացման իրավական կարգավորմանը: **Քրեական հետապնդում հարուցելը անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի որոշման հաստատումն է հսկող դատախազի կողմից:**

Քրեական հետապնդումը վարույթի շարժիչ ուժն է, քանի որ դրա հետագա իրականացումից կամ հրաժարումից է կախված վարույթի ընթացքը և բովանդակությունը: Քրեական հետապնդում հարուցելը նախաքննության շրջադարձային ենթափուլ է:

Քրեական հետապնդման հարուցումը դատախազի բացառիկ լիազորությունն է: Դատախազը պետության քրեական քաղաքականությունն իրացնող և դրա համար պատասխանատու պաշտոնատար անձ է, որին պատկանում է քրեական գործերով քրեական հետապնդման տնօրինման իրավասությունը, այսինքն՝ քրեական հետապնդում հարուցելու, ինչպես նաև դրանից ձեռնպահ մնալու բացառիկ լիազորությունները: Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկո-

դության գործառույթի սահմանման պայմաններում դատախազությանը մեկ այլ քրեական հետապնդում հարուցելու գործառույթի վերապահումը վկայում է քրեական դատավարությունում դրա բացառիկ նշանակության մասին: Սահմանադրությունը, տարանջատելով քրեական հետապնդման հարուցումը դատախազական հսկողության գործառույթից, նպատակ է հետապնդել նշել առաջինի առանձնահատուկ նշանակությունը: Այսինքն՝ քրեական հետապնդման հարուցում պետք է դիտել մինչդատական վարույթում այնպիսի դատավարական գործողության կատարումը կամ որոշման ընդունումը, որը, դուրս լինելով դատախազության հսկողական լիազորությունների շրջանակից, բեկումնային կլինի մինչդատական վարույթի համար և կկանխորոշի քրեական դատավարության հետագա ընթացքը:

Քրեական դատավարության համար կենտրոնական նշանակություն ունեցող այնպիսի ակտի կայացման գործում, ինչպիսին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումն է, դատախազը չի կարող դրվագային դերակատարում ունենալ:

Քրեական հետապնդման հարուցման նույնացումը որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման հաստատման հետ պայմանավորված է ինչպես մինչդատական վարույթի, այնպես էլ ամբողջ քրեական դատավարության համար դրա ունեցած նշանակությամբ և կենտրոնական տեղով: Նախ և առաջ, այդ պահից է ներկայացվում սկզբնական պաշտոնական մեղադրանքը: Թեև այն գործի հետագա քննության ընթացքում կարող է փոփոխվել և հստակեցվել, սակայն նույնիսկ իր սկզբնական տեսքով գործի հետագա քննության համար ունի հսկայական կազմակերպական և ուղղորդիչ նշանակություն: Որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման նշանակությունն ընդգծում է նաև այն հանգամանքը, որ հենց այդ պահից է ի հայտ գալիս մինչդատական վարույթի կենտրոնական մասնակիցը՝ մեղադրյալը, որի հետ են կապվում քրեադատավարական հետագա բոլոր հարաբերությունները¹:

¹ Նշված տեսակետը գերակշռում է նաև ժամանակակից իրավաբանական գրականության մեջ (տես, օրինակ, А.Г. Халиулин. Уголовное преследование как функция прокуратуры Российской Федерации (проблемы осуществления в условиях правовой реформы). М., 1997, 15-16 էջերը, Գ.Ս. Ղազինյան, Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Երևան, 2001, էջ 265-279 և այլն):

Այսպիսի մոտեցումը բխում է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայից և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից: Մասնավորապես, Եվրոպական դատարանն *Իսկուրետն ընդդեմ Բելգիայի* գործով 28.10.1999թ-ի որոշման մեջ ուղղակիորեն նշել է. «Կոնվենցիայի հոդված 6-ը կիրառվում է այն դեպքում, երբ «քրեական մեղադրանքը» ներկայացվել է որոշակի անձի, այսինքն՝ այն բանից հետո, երբ այդ անձը «պետական իշխանության իրավասու մարմնի կողմից պաշտոնապես տեղեկացվել է իր կողմից քրեորեն պատժելի իրավախախտում կատարելու վերաբերյալ ենթադրության առկայության մասին»¹: Եվ ընդհակառակը, «մեղադրանքը» բացակայում է ոստիկանական քննություն հարուցելու (*նկատի է ունեցվում այն իրավիճակը, երբ հանցանք կատարած անձը դեռևս հայտնի չէ*), վկաների հարցաքննություն կամ այլ գործողություններ կատարելու դեպքում, որոնք շահագրգիռ անձի վրա ուղղակի ազդեցություն չեն գործում²:

Օրենսդրական առաջարկվող իրավակարգավորումը հնարավորություն է տալիս հրաժարվել «կասկածյալ» սուբյեկտից և միասնական դատավարական կարգավիճակ սահմանել քրեական հետապնդման ենթարկված անձի համար: Ինչ վերաբերում է մինչև քրեական հետապնդման հարուցումը կատարվող քննչական և այլ դատավարական գործողություններին, ապա դրանք դիտվում են որպես քրեական հետապնդման հարուցման նախապատրաստություն, քանի որ վերջիններս նույնպես ուղղված են քրեական հետապնդման հարուցման համար անհրաժեշտ հիմքերի հայտնաբերմանը: Նման պարագայում, իհարկե, հանցանքի կատարման մեջ կասկածվող անձն օգտվում է մեղադրյալի համար սահմանված բոլոր իրավունքներից: Այս տրամաբանությունն է ընկած նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիմքում, որը պարտադրում է քրեական դատավարության շրջանակներում անձի իրավունքների սահմանափակման առաջին իսկ պահից երաշխավորել վերջինիս դատավարական իրավունքները և առաջին հերթին՝ պաշտպանության իրավունքը (տես, օրինակ, Էկլեն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության³, 15.07.1982թ. և այլն):

¹ St' u Escoubet v. Belgium, 28 October 1999, Application no. 26780/95:

² St' u A.A. Татоян. Расследование дела в системе уголовно-процессуальных функций (сравнительно-правовой анализ). Ереван, 2007, 145-149 էջերը:

³ St' u Eckle v. Federal Republic of Germany, 15 July 1982, Application no. 8130/78:

Վերոգրյալի առնչությամբ, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում բերման ենթարկված անձանց իրավունքների երաշխավորման հետ կապված որոշակի դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը *Գ.Միքայելյանի վերաբերյալ* որոշման մեջ¹:

Մասնավորապես, Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բերվածի իրավական վիճակը համապատասխանում է «քրեական մեղադրանքի» ներկայացման Կոնվենցիոն պահանջին՝ Եվրոպական դատարանի բովանդակային մեկնաբանմամբ: Ուստի բերվածի կարգավիճակի առանձնահատկությունները հաշվի առնելով (նախնական և կարճաժամկետ բնույթը)՝ բերվածը (այսինքն՝ անձ, որի նկատմամբ արդեն կան քրեական մեղադրանքի տարրեր) պետք է օժտված լինի առնվազն այնպիսի իրավունքներով, որոնք բնորոշ են մեղադրյալին կամ կասկածյալին (օրինակ՝ իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը, հրավիրելու իր փաստաբանին, լռելու իրավունքը և այլն):

Այնուհետև, Վճռաբեկ դատարանն արձանագրել է. “Այնքանով, որքանով վերաբերելի են (*mutatis mutandis*), նշված իրավունքներով և երաշխիքներով օժտված են նաև ոստիկանությունում կամ քրեական հետապնդման այլ մարմնում գտնվող, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող այն անձինք, որոնք կարող են ողջամտորեն ենթադրել, որ (1) իրենց ազատությունը սահմանափակված է կամ իրենք ազատությունից զրկված են, և, միաժամանակ, որ (2) իրենք կասկածվում են հանցագործության մեջ” (կետ 22):

Վերոգրյալի հետ կապված, քաղաքացի Վ.Ի.Մասլովի բողոքի հիման վրա 2000 թվականի հունիսի 27-ի որոշմամբ համանման իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը²:

Քրեական հետապնդման հարուցման վերը նշած մոդելն իր արտացոլումն է ստացել Արևելաեվրոպական որոշ երկրների քրեադատավարական օրենսգրքերում: Մասնավորապես, Լատվիայի քրեական դատա-

¹ Տե՛ս Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների ժողովածու, 2009թ., 2010թ. առաջին կիսամյակ, Երևան, 2010թ., 299-311 էջերը:

² Տե՛ս <http://zaki.ru/pagesnew.php?id=10199>:

վարության օրենսգրքի համաձայն քրեական հետապնդումը հարուցվում է քննությունից հետո, երբ ապացույցների որոշակի համակցության հիման վրա որոշում է կայացվում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին (402 և 403 հոդվածներ): Ավելին, առանձին հատուկ վարույթների առկայության դեպքում երբեմն քրեական հետապնդման հարուցումը կապվում է գործը դատարան ուղարկելու հետ (Լատվիայի քր. դատ. օր-ի 431 հոդվածի 3-րդ մաս): Քրեական հետապնդում հարուցելու իրավունքը պատկանում է դատախազին (Լատվիայի քր. դատ. օր-ի հոդվածներ 39, 402, 403): Մլովակիայի քր. դատ. օր-ի 160 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե հաստատվում է, որ հանցագործությունը կատարվել է և հիմքեր կան հավատալու, որ այն կատարել է կոնկրետ անձը, քննություն իրականացնողն անհապաղ քրեական հետապնդում է հարուցում:

Քրեական հետապնդում հարուցելու հետ է կապվում դատավարական ժամկետների մեծ մասի հոսքը և հաշվարկը (քրեական հետապնդման, քրեական վարույթը կասեցնելու, կալանավորման ժամկետները): Նախաքննության ընթացքում կիրառվող ժամկետների հաշվարկն առավելապես պետք է կապված լինի քրեական հետապնդում հարուցելու հետ:

Քրեական հետապնդման ժամկետի կիրառումը չի կարելի կապել կալանավորման ժամկետի հետ, քանի որ քրեական հետապնդման ժամկետները հոսում են անկախ անձի նկատմամբ կիրառված հարկադրանքի միջոցից:

Քրեական հետապնդման հարուցումը դատախազի կողմից քննիչի՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը հաստատելը համարելը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ քննիչն է անմիջականորեն քննում գործը և որպես մեղադրյալ ներգրավելու գաղափարը հաստունանում է հենց քննիչի մոտ: Քննիչին նման իրավասությունից զրկելն էականորեն կսահմանափակի վերջինիս ինքնուրույնությունը և քննիչին կվերածի զուտ մեխանիկական գործառույթներ իրականացնողի: Բացի այդ, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելու իրավունքի վերապահումը դատախազին պրակտիկորեն արդարացված չէ, քանի որ դատախազն այդ որոշումը, որպես կանոն, տեխնիկապես ինքը չի կայացնում (շարադրում):

Քրեական հետապնդում հարուցելու սահմանադրական գործառույթի բաղկացուցիչ մասն է դատախազի հայեցողական քրեական հետապնդման լիազորությունը: Համաձայն դրա՝ արարքի վտանգավորությ-

յան աստիճանը (ոչ մեծ ծանրության հանցագործություններ), մեղադրյալի անձը և մի շարք այլ հանգամանքներ (գործուն գոջալ, վնասը հատուցել և այլն) հաշվի առնելով՝ դատախազն իրավունք ունի չհարուցել քրեական հետապնդում կամ որոշակի պայմանների առկայության դեպքում դադարեցնել հարուցված քրեական հետապնդումը: Նշված ինստիտուտը ենթադրում է օրենսդրական մշակվածության բարձր աստիճան և անհրաժեշտ իրավական երաշխիքներով ապահովվածություն, մասնավորապես, տուժողի կողմից դատախազի համապատասխան որոշումը դատարան բողոքարկելու հնարավորություն:

Քննիչի, դատախազի և քննչական ստորաբաժանման ղեկավարի գործառույթները մինչդատական վարույթի ընթացքում:

Մինչդատական վարույթում քննիչի, դատախազի և քննչական ստորաբաժանման ղեկավարի (Նախագծում այս սուբյեկտները կոչվում են քրեական վարույթի հանրային մասնակիցներ) գործառույթների հստակ իրավակարգավորումը մինչդատական վարույթի արագությունն ու օպերատիվությունը երաշխավորող կարևորագույն պայմաններից է: Նախագծում քրեադատավարական գործունեության այդ սուբյեկտների փոխհարաբերությունների կանոնակարգման հիմքում դրվել է գործառութային տարանջատման սկզբունքը: Մասնավորապես, **քննիչի, դատախազի և քննչական ստորաբաժանման ղեկավարի փոխհարաբերությունների առանցքը սուբյեկտ-գործառույթ-լիազորություն շղթան է: Սեկ սուբյեկտը չպետք է միջամտի մյուսի գործառույթի իրականացմանը կամ կրկնօրինակի այն:** Միաժամանակ նշված սուբյեկտների լիազորությունները պետք է օրգանապես բխեն նրանց գործառույթներից և սահմանվեն այն հաշվով, որպեսզի ապահովեն հակակշիռների կառուցակարգեր, այլ ոչ թե ձևավորեն ենթակայության հարաբերություններ:

Մինչդատական վարույթում քննիչի միակ գործառույթը քննության իրականացումն է, նախաքննություն կատարելը: Այս գործառույթի իրականացման շրջանակներում քրեական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար քննիչը լիազորված է ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ընդունել անհրաժեշտ որոշումներ և իրականացնել համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններ: Քննիչը պատասխանատու է նախաքննության ընթացքի, իր ընդունած որոշումների և իրականացրած գործողությունների համար: Քննիչի դատավարական ինքնուրույնությունը նշանակում է նաև, որ նա իրավունք ունի դատախազի հանձնարարությունները և որոշումները բողո-

քարկել վերադաս դատախազին, ինչպես նաև հսկող դատախազին բողոքարկել քննչական ստարաբաժանման ղեկավարի հանձնարարություններն ու որոշումները:

Նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը ենթադրում է դատախազի կողմից օրենքի խախտումների բացահայտմանը, վերացմանը և նախազգուշացմանն ուղղված իր հսկողական լիազորությունների իրացում:

Թեև նախաքննությունը գրեթե ամբողջությամբ գտնվում է դատախազական հսկողության ներքո և քննիչի կողմից ընդունվող որոշումները և իրականացվող գործողությունները դատախազական հսկողության պարտադիր օբյեկտ են, սակայն հաշվի առնելով բացառապես քննիչի կողմից քննության գործառույթի իրականացման հանգամանքը և ելնելով քննիչի, որպես նախաքննություն իրականացնող պաշտոնատար անձի, օրինապահության կանխավարկածից, **դատախազն իրավունք ունի ստուգելու միայն արդեն ընդունված որոշման կամ կատարված գործողության օրինականությունը, ինչպես նաև դրա արդյունքում ձեռնարկել օրինականության խախտումների վերացմանն ուղղված միջոցառումներ:**

Նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը ներառում է այնպիսի լիազորություններ, ինչպիսիք են քննիչին օրինականության խախտումների վերցմանն ուղղված հանձնարարություններ տալը, քննչական գործողությունների կատարմանը մասնակցելը, քննիչի անօրինական որոշումները վերացնելը, քննիչին վարույթից հեռացնելը, մեղադրական եզրակացությունը կամ մեղադրական ակտը հաստատելը և այլն: Դատախազը լիազորված է նաև ստուգել նյութերը, քննչական գործողությունների վերաբերյալ փաստաթղթերը, կարող է հեռացնել քննիչին վարույթից, սակայն չի կարող նոր անձ նշանակել և այլն: Դատախազն անհրաժեշտության դեպքում կարող է մասնակցել քննչական գործողություններին, քննիչին տալ պարտադիր կատարման ենթակա հանձնարարություններ:

Ելնելով դատախազի հսկողական գործառույթի արդյունավետ իրականացման և քննիչի դատավարական ինքնուրույնության ապահովման գաղափարից՝ դատախազը համաձայնություն է տալիս քննիչի՝ դատավարական հարկադրանքի միջոցների վերաբերյալ միջնորդություններին, իսկ քննչական գործողությունների դեպքում՝ նա տեղյակ է պահվում այդ մասին: Դատախազն անհապաղ ազատում է ոչ իրավաչափ պահվող ան-

ձանց, վերացնում է իրավունքների ցանկացած ոչ իրավաչափ սահմանափակում և այլն:

Գատախազի և քննիչի փոխհարաբերությունների տեսանկյունից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև **դատախազին քննիչի գործողությունների դեմ բերված բողոքները քննարկելու, նրան այդ բողոքների հեղինակներից բացատրություններ վերցնելու լիազորություն վերապահելը**: Նման լիազորությունը բխում է նախաքննության օրինակականության նկատմամբ հսկողություն իրականացնելու դատախազի սահմանադրական գործառույթից և կարող է իրացվել դատախազի հսկողական վարույթի շրջանակներում (քրեական վարույթից դուրս): Նշված բողոքների քննարկման ավարտին դատախազը հնարավորություն կունենա առանձին հանձնարարություններ տալու քննիչին՝ ուղղված քրեական վարույթի ընթացքում օրինակականության խախտումների նախագուշացմանը, դրանց վերացմանը: Գատախազին նշված լիազորության վերապահումը, սակայն, չի նշանակում, թե նա կարող է միջամտել քրեական գործով ապացուցման գործընթացին. այդ բողոքների քննարկումը չի կարող ներառել ապացուցման առարկայի հետ կապված հարցեր:

Այսպիսի մոտեցումը պայմանավորված է Հայեցակարգում տեղ գտած այն հիմնարար մոտեցմամբ, որ **դատախազական հսկողության սահմանադրական գործառույթի իրացումը չի նշանակում դատախազի կողմից քննության ընթացքի կանխորոշում կամ ուղղորդում, քննիչի փոխարեն որոշումների ընդունում կամ գործողությունների կատարում**: Նման մոտեցման պայմաններում անհարկի չի սահմանափակվի նաև քննիչի դատավարական ինքնուրույնությունը:

ՀՀ-ում մինչդատական վարույթն իրականացնող մարմինների գոյություն ունեցող համակարգի պայմաններում **քննչական ստորաբաժանման ղեկավարը պետք է օժտված լինի քննության գործընթացը կազմակերպելու և ապահովելու, այսինքն՝ գերատեսչական վերահսկողություն իրականացնելու գործառույթով, ինչը ենթադրում է իր ենթակայությանը գործող քննիչների նկատմամբ մեթոդական, կազմակերպական աշխատանքների արդյունավետ իրականացման համար վերահսկողական լիազորությունների իրականացում**: Դրանք պետք է ուղղված լինեն քննիչի գործունեությանը օժանդակելուն:

Միաժամանակ, պետք է ելնել այն հիմնարար գաղափարից, որ քննչական ստորաբաժանման ղեկավարին որոշակի լիազորությունների վերապահումը չպետք է խախտի քրեական դատավարության սուբյեկտ-

ների գործառնությունների ներդաշնակ հարաբերակցությունը և չպետք է հանգեցնի դատախազի փոխարինմանը քննչական ստորաբաժանման ղեկավարով: Պետք է բացառվեն նրանց միջև մրցակցությունն ու լիազորությունների կրկնությունը¹: Ընդ որում, քննչական ստորաբաժանման ղեկավարին ՀՀ քրեական դատավարության ապագա օրենսգրքով վերապահվելիք լիազորությունները պետք է ունենան խիստ որոշակի շրջանակ:

Մասնավորապես, քննության գործընթացը կազմակերպելու և ապահովելու նպատակով քննչական ստորաբաժանման ղեկավարը պետք է իրավունք ունենա՝ ա) իր որոշմամբ քննիչին հանձնարարել նախաքննություն կատարումը. բ) միևնույն ստորաբաժանման շրջանակներում վարույթը մի քննիչից որոշմամբ հանձնել մյուսին. գ) վարույթից հեռացված քննիչին փոխարինել այլ քննիչով. դ) ինչպես սեփական նախաձեռնությամբ, այնպես էլ դատախազի հանձնարարությամբ ձևավորել քննչական խումբ. ե) հետևել քննիչի կողմից դատախազի հանձնարարությունների և քննչական ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությունների կատարմանը, քրեական հետապնդման և կալանքի տակ պահելու ժամկետների պահպանմանը. զ) գործն ընդունել իր վարույթ և անձամբ կատարել նախաքննություն. է) քննիչին տալ իր գործառնության բխող հանձնարարություններ: Նա կարող է ծանոթանալ վարույթի նյութերին, սակայն իրավունք ունի տալու միայն կազմակերպական բնույթի հանձնարարություններ: Ընդ որում, քննչական բաժնի պետը որոշումների ու հանձնարարությունների պատճեններն անհապաղ ուղարկում է դատախազին:

Դրա հետ մեկտեղ քննչական ստորաբաժանման ղեկավարը քննիչին հանձնարարված վարույթի շրջանակներում իրավունք չունի ընդունել որոշումներ կամ կատարել քննչական կամ այլ դատավարական գործողություններ, վերացնել քննիչի որոշումները կամ նրան տալ քննության ընթացքը կանխորոշող հանձնարարություններ:

Հետաքրքրական է, որ եվրոպական այն երկրերում, որտեղ հիմք է ընդունվել քննչական ստորաբաժանման ղեկավարի կողմից միայն գերատեսչական վերահսկողության գործառնությամբ իրականացնելու մոտեցու-

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Казинян Г.С.. Актуальные проблемы уголовно-процессуального законодательства в третьей Республике Армения (сравнительно-правовое исследование). Ереван, 1999, 122-136 էջերը:

մը, քննչական ստորաբաժանման ղեկավարի կարգավիճակի հետ կապված հարցերը նույնիսկ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորման առարկա չեն: Այս դեպքում քննչական ստորաբաժանման ղեկավարի իրավական կարգավիճակի հետ կապված հարցերը լուծվում են համապատասխան գերատեսչություններին վերաբերող ակտերով: Հարցի լուծման նման տարբերակներ են որդեգրել այնպիսի երկրների քրեական դատավարության օրենսգրքեր, ինչպիսիք են Բուլղարիան, Էստոնիան, Լեհաստանը, Սլովակիան և այլն:

Պետք է նշել, որ դատախազի և քննչական ստորաբաժանման ղեկավարի գործառույթների տարանջատման իրավական կանոնակարգման նմանատիպ մոդել է առաջարկվում նաև իրավաբանական գրականության մեջ¹:

Ձերբակալում և կալանք: Հայեցակարգում, ինչպես նաև Նախագծում առանձնահատուկ տեղ է հատկացված դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման հիմքերին, պայմաններին և դատավարական կարգին: Այս հարցում մանրամասն համեմատական ուսումնասիրության են ենթարկվել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ միջազգային պայմանագրերի պահանջները, ինչպես նաև միջազգային փորձը: Դա հատկապես դրսևորվել է ձերբակալման և կալանքի իրավակարգավորման հետ կապված հարցերը լուծելիս:

Այստեղ, մասնավորապես, հիմք է ընդունվել այն մոտեցումը, որ նշված հարկադրանքի միջոցները անձին ազատությունից զրկելու միասնական կառուցակարգի բաղադրատարրեր են, որոնք գտնվում են անքակտելի փոխադարձ կապի մեջ: Նախագծում ներդրվել է նաև այն հիմնադրույթը, ըստ որի՝ գործում է ձերբակալման անօրինականության կանխավարկածը, քանի դեռ դատարանը չի հաստատել հակառակը, ինչպես նաև Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջները, որոնք կոչված են ապահովագրել անձին անհիմն ազատազրկումից²:

Ձերբակալումը առանց դատարանի որոշման անձի՝ ՀՀ սահմանադրության 16 հոդվածով սահմանված ազատության իրավունքի սահմանա-

¹ Տե՛ս օրինակ, Գ.Ս.Ղազինյան, նշված աշխատությունը, 319-334 էջերը, Օ.Դ. Жук. Уголовное преследование по уголовным делам об организации преступных сообществ (преступных организаций). М., 2004, 46-47 էջերը և այլն:

² Այս մասին տես նաև, ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի «Հայաստանում դատավարությունների դիտարկում» ծրագրի վերջնական զեկույցը (ապրիլ 2008 – հուլիս 2009):

փակումն է: Ձերբակալման նպատակը հանցանքի կատարման մեջ կասկածվող անձին դատարան ներկայացնելն է:

Դատավարական հարկադրանքի այս միջոցի կիրառումը դիտվում է որպես որոշակի իրավիճակից թելադրվող անխուսափելի միջոցառում, երբ անձի ֆիզիկական ներկայությունն անհրաժեշտ է առանձին դատավարական գործողություններ կատարելու և փաստաթղթեր ձևակերպելու համար: Բացի այդ, անձը կարող է ազատությունից զրկվել միայն այն դեպքում, երբ արդեն առկա են հանցագործությանը նրա առնչությունը հաստատող փաստական տվյալներ, այլ ոչ թե անձին հարկավոր է ձերբակալել՝ հանցագործությանը նրա առնչությունը պարզելու համար: Այս կանոնն էապես բարձրացնում է անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի ապահովմանը:

Վերոգրյալով հանդերձ, ըստ Նախագծի 104-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ձերբակալումը կարող է կիրառվել.

ա/ հանցանք կատարած լինելու ամփոփականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում,

բ/ ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար,

գ/ խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի նկատմամբ,

դ/ դատավարության մասնակցի (դատավարության մասնավոր սուբյեկտի), բացառությամբ պաշտպանի և ներկայացուցչի՝ սույն օրենսգրքով նախատեսված դատավարական պարտականությունների կատարումն ապահովելու համար¹:

Ձերբակալման առաջին հիմքով իրականացված ձերբակալումը, համաձայն Նախագծի 105-րդ հոդվածի 5-րդ մասի, չի կարող տևել 72

¹ Նախագծի նորամուծություններից է նաև այն, որ բերման ենթարկելը՝ որպես դատավարական հարկադրանքի միջոց, փոխարինվել է ձերբակալումով: Այսինքն՝ անձին հարկադրաբար վարույթն իրականացնող մարմին բերելու անհրաժեշտության դեպքում նա կհամարվի ձերբակալված: Նման իրավակարգավորումը, կարծում ենք, կնաստի որոշակի դատավարական գործողություններ կատարելու համար բերման ենթարկված անձանց իրավունքների և օրինական շահերի ապահովման երաշխիքների ամրապնդմանը, ինչպես նաև կհամապատասխանի միջազգային չափանիշներին: Պետք է նշել, որ հարցի լուծման այսպիսի մոտեցումը հավանության է արժանացել նախագծի իրավական փորձաքննությունն իրականացրած միջազգային կազմակերպությունների ու փորձագետների կողմից:

ժամից ավելի: Ձերբակալված անձին պետք է մեղադրանք ներկայացվի և մեղադրյալը պետք է դատարան տարվի՝ նրա կալանավորման հարցը լուծելու համար ոչ ուշ, քան ձերբակալման պահից 60 ժամվա ընթացքում: Հակառակ դեպքում, անձը պետք է ազատ արձակվի:

Նման իրավակարգավորումն ինքնանպատակ չէ և պայմանավորված է այն հանգամանքով, որ 12 ժամ ժամանակ պետք է տրամադրվի դատարանին՝ ձերբակալման օրինականությունը ստուգելու և կալանքի հարցը լուծելու համար: Սա կնպաստի ազատությունից զրկելու հետ կապված դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման նկատմամբ դատական վերահսկողության արդյունավետության բարձրացմանը: Նման իրավակարգավորման դեպքում, անձի ազատության իրավունքը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի բնորոշմամբ, կդառնա իրական, այլ ոչ թե պատրանքային (իլյուզոր)¹:

Այսպիսի իրավակարգավորման հետ է կապված ևս մեկ կարևոր հարց: Խոսքը վերաբերում է ձերբակալման և կալանքի հարաբերակցությանն այն առումով, թե ինչպես պետք է լուծվի անձի կալանավորման հարցը, եթե քրեական հետապնդման մարմնի կողմից թույլ է տրվել նրա ձերբակալման հետ կապված խախտում: Այս առնչությամբ, ՀՀ վճռաբեկ դատարանը *Գագիկ Միքայելյանի վերաբերյալ որոշման* մեջ արտահայտել է որոշակի իրավական դիրքորոշում: Մասնավորապես, այդ որոշման 32-րդ կետի համաձայն՝ կալանավորման միջնորդությանը նախորդած ձերբակալման ընթացակարգի (ներառյալ՝ ժամկետի վերաբերյալ պահանջի) խախտումը կալանավորման միջնորդությունը մերժելու հիմք չէ, եթե հանցագործությանը մեղադրյալի առնչությունը և կալանավորման հիմքերի առկայությունը դատարանը համարում է հիմնավորված: ՀՀ վճռաբեկ դատարանը նման մոտեցում արտահայտելու համար հիմք է ընդունել ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. սեպտեմբերի 12-ի ՄԳՈ-827 որոշման մեջ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Ձերբակալում» և «կալանավորում» ինստիտուտների՝ օրենսդրությամբ սահմանված նպատակների և հիմքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այդ ինստիտուտներն ունեն ինքնուրույն բովանդակություն, հետապնդում են միմյանցից ըստ էության տարբերվող նպատակներ, ունեն կիրառման միմյանցից էապես տարբերվող հիմքեր: Գրանցից յուրաքանչյուրն օրենսդիրն ընտրել է որպես ՀՀ Սահմանադ-

¹ St'u, Prince Hans-Adams II v. Lichtenstein, Application no. 42527/98, 12.06.2001.

րության 16-րդ հոդվածի 1-ին մասով մատնանշված առանձին նպատակների հասնելու ինքնուրույն դատավարական միջոց, և կիրառվում է տարբեր հիմքերի առկայությամբ: Հետևաբար, դրանցից յուրաքանչյուրը, առանց որևէ փոխապայմանավորվածության, փոխկապակցվածության և հաջորդականության, ինքնուրույնաբար կարող է կիրառվել, երբ առկա են դրանով հետապնդվող նպատակները և դրա կիրառման համար անհրաժեշտ հիմքերը: (...)» (6-րդ կետի 4-րդ պարբերություն)¹:

Այնուհետև, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է. «Ուստի կալանավորման միջնորդությունը քննելիս ձեռքակալման ընթացակարգի խախտման փաստ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է ձեռնարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան միջոցներ: Ձեռքակալման առավելագույն ժամկետի խախտման պարագայում այդ միջոցները պետք է հանգեն հետևյալին.

ա) 72-ժամյա ժամկետի խախտման փաստի արձանագրում,

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360.1 հոդվածի հիման վրա լրացուցիչ որոշման կայացում, կամ, խախտումն ակնհայտ և կոպիտ լինելու դեպքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին դիմում,

գ) անօրինական ձեռքակալման համար փոխհատուցում ստանալու պահանջով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան դիմելու ընթացակարգի պարզաբանում:» (կետ 34)²:

Քննարկվող հարցի հետ կապված, Նախագիծը որդեգրել է այլ մոտեցում. **ձեռքակալման հետ կապված խախտումները չեն կարող իրենց անդրադարձը չունենալ կալանավորման վերաբերյալ դատարանի որոշման վրա:** Մասնավորապես, եթե դատարանը կալանքի հարցը լուծելիս պարզի, որ թույլ է տրվել ձեռքակալման հետ կապված խախտում, ապա դա կարող է հիմք լինել կալանքի միջնորդությունը մերժելու համար: Այսպիսի մոտեցումը հիմնված է այն հիմնարար գաղափարի վրա, որ չի կարելի ձևական մոտեցմամբ միմյանցից բացարձակ առանձնացնել քննարկվող երկու հարկադրանքի միջոցները և արձանագրել, թե դրան-

¹ Տե՛ս, <http://concourt.am/armenian/decisions/common/2009/index.htm>:

² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների ժողովածու, 2009թ., 2010թ. առաջին կիսամյակ, Երևան, 2010թ., 299-311 էջերը:

ցից մեկը մյուսի հետ որևէ առնչություն չունի. հակառակը՝ սրանք հաջորդում են իրար, ազատությունից զրկման միասնական կառուցակարգի տարրերն են և եթե մեկի դեպքում թույլ տրվի խախտում, ապա դա անխուսափելիորեն կազդի նաև մյուսի կիրառման վրա¹:

Նախագծի բնութագրական առանձնահատկություններից է այն, որ Եվրոպական դատարանի, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկայի (օրինակ՝ *Ասլան Ավետիսյանի վերաբերյալ որոշումը*²) հիման վրա իրականացվել է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և կալանավորման ժամկետի երկարացման հիմքերի իրավական տարանջատում: Մասնավորապես, Նախագծի համաձայն՝ կալանքի ժամկետը երկարացնելիս դատարանի առջև անհրաժեշտ է հիմնավորել նաև վարույթն իրականացնող մարմնի պատշաճ ջանասիրությունը, ինչպես նաև տվյալ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու անհրաժեշտությունը (113-րդ հոդվածի 4-րդ մաս):

Խիստ կարևոր և սկզբունքային ենք համարում Նախագծի հիմքում ընկած մոտեցումն այն մասին, որ **կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը անհնարին է կամ անբավարար մեղադրյալի անօրինական վարքագիծը կանխելու համար:** Ասվածից հետևում է, որ կալանքը բացառիկ խափանման միջոց է և կարող է կիրառություն ստանալ միայն բացառիկ դեպքերում³: Սա տարբերվում է ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում տեղ գտած իրավակարգավորումից և դրա հիման վրա ձևա-

¹ Այսպիսի մոտեցումը համահունչ է նաև ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի «Հայաստանում դատավարությունների դիտարկում» ծրագրի վերջնական գեկույցում (ապրիլ 2008 – հուլիս 2009) արտահայտված դիրքորոշումներին: Տես նաև, Handbook of International Standards on Pretrial Detention Procedure. ABA Rule of Law Initiative. Washington, 2010.

² Տե՛ս http://www.lex.am/docs/avd0022-06_2008.pdf:

³ Այս մասին նշվել է նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի վերաբերյալ 30.06.1982 թվականի թիվ 8 ընդհանուր մեկնաբանության 3-րդ կետում (<http://www2.ohchr.org/english/bodies/hrc/comments.htm>): Այս մասին տես նաև՝ United Nations Standard Minimum Rules for Non-custodial Measures (The Tokyo Rules), Adopted by the UN General Assembly resolution 45/110 of 14 December 1990 (<http://www2.ohchr.org/english/law/tokyorules.htm>):

վորված պրակտիկայից, երբ առաջնահերթ քննարկվում է մեղադրյալի նկատմամբ կալանքի կիրառության հնարավորության հարցը:

Խափանման միջոցները կարող են կիրառվել միայն անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը դատախազի կողմից հաստատելուց (այսինքն՝ քրեական հետապնդում հարուցելուց) հետո:

Նախագծի հիմնական բնութագրական գծերից մեկը խափանման միջոցների շրջանակի ընդլայնումն է: Նոր խափանման միջոցների (ոստիկանությունում հաշվառվելը, տնային կալանքը, ՀՀ-ից բացակայելու արգելքը և այլն) նախատեսումը, ինչպես նաև գրավը որպես ինքնուրույն խափանման միջոց առանձնացնելը, կարծում ենք, կնպաստեն իրավակիրառ պրակտիկայում անհիմն կամ հարկադրված կալանավորումների թվի կրճատմանը: Նշված նպատակին հասնելուն, մեր կարծիքով, կնպաստի նաև Նախագծում ամրագրված՝ կալանքի փոխարեն համակցությամբ այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու հնարավորությունը:

ՀՀ քրեական դատավարության ապագա օրենսգրքի հայեցակարգային ձեռքբերումներից է **հրապարակայնության սկզբունքի տարածումը մինչդատական վարույթում դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ անձին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդությունների քննարկման վրա:**

Հրապարակայնության սկզբունքը նախատեսված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում: Վերջինս, կարևորելով հրապարակայնությունը, որպես արդարադատության իրականացման կարևոր և պարտադիր պայման, այն դիտել է որպես արդարացի դատական քննության իրավունքի բաղադրիչ: Մասնավորապես, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատական քննության իրավունք (...):»:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երկրորդ մասն ամբողջապես նվիրված է հրապարակայնության սկզբունքին, քանի որ Կոնվենցիան հրապարակայնությունը դիտում է որպես արդարացի դատաքննության իրավունքի բաղկացուցիչ և դրա ապահովման կարևորագույն երաշխիք: Քննարկվող սկզբունքի առանձնակի կարևորությունն ընդգծվել է նաև Մարդու իրա-

վունքների եվրոպական դատարանի դատական ակտերում: Եվրոպական դատարանը իր մի շարք որոշումներում, մասնավորապես, նշել է. «Հոդված 6(1)-ում ամրագրված՝ դատական մարմինների առաջ դատաքննության հրապարակային բնույթը դատավարության կողմերին պաշտպանում է գաղտնիության պայմաններում, հասարակական դիտարկումից դուրս արդարադատության իրականացումից: Միևնույն ժամանակ այն ստորադաս և վերադաս դատարանների նկատմամբ վստահության ապահովման միջոցներից է: Արդարադատության իրականացումը տեսանելի դարձնելով՝ հրապարակայնությունը նպաստում է Հոդված 6(1)-ի նպատակի, այն է՝ արդարացի դատաքննության նվաճմանը, որի երաշխիքը Կոնվենցիայի իմաստով ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից է»¹:

Հրապարակայնության սկզբունքին անդրադարձել է նաև ԱՄՆ Գերագույն դատարանը: Վերջինս իր որոշումներից մեկում իրավացիորեն նշել է, որ հրապարակային դատական քննությունը մի կողմից մեղադրյալին ստիպում է ձեռնպահ մնալ «դատարանը որպես մարդկանց վրա հարձակվելու գործիք» օգտագործելու փորձերից, մյուս կողմից՝ այն «դատական իշխանության հնարավոր չարաշահումները» զսպելու միջոց է²:

Անժխտելի է այն փաստը, որ դատարանն իր գործառույթները (այդ թվում՝ դատական վերահսկողության) հաջողությամբ կարող է իրականացնել միայն այն դեպքում, երբ հասարակության կողմից այն դիտվի որպես սեփական իրավունքների պաշտպանության գործուն կառուցակարգ՝ հիմնված արդարության վեհ գաղափարի վրա: Իսկ դատական իշխանության նկատմամբ հասարակության այդպիսի վերաբերմունք կարող է ձևավորվել միայն այն դեպքում, երբ դատարանն իրականացնի «Քափանցիկ» գործունեություն՝ մի կողմից հասարակությանը ընձեռնելով իր գործունեությունը վերահսկելու հնարավորություն, մյուս կողմից՝ ապահովելով հաշվետվողականությունը նույն հասարակության առաջ:

Ըստ այդմ, մինչդատական վարությամբ դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ անձին կալանքի տակ պա-

¹ *Stu Axen v. Federal Republic of Germany*, 8 December 1983, Series A no 72; *Pretto v. Italy*, 8 December 1983, Series A no 71; *Sutter v. Switzerland*, 22 February 1984, Series A no 74.

² *Stu Уильям Бернам Правовая система Соединенных Штатов Америки*. М., РИО “Новая юстиция”, 2007, էջ 507:

հելու ժամկետը երկարացնելու միջնորդությունների քննարկման վրա հրապարակայնության սկզբունքի տարածումը, կարծում ենք, մեծապես կնպաստի դատարանների նկատմամբ հասարակական վստահության բարձրացմանը, ինչը վերջին ժամանակներս դարձել է առաջնահերթ լուծում պահանջող խնդիր: Սա, իհարկե, չի նշանակում, թե մինչդատական վարույթի տվյալները հասարակության համար ամբողջությամբ պետք է դառնան մատչելի: Սկզբունքային մոտեցումն այն է, որ պետք է ապահովել անհրաժեշտ հավասարակշռություն, մի կողմից, նախնական քննության գաղտնիության ընդհանուր կանոնով հետապնդվող նպատակի, մյուս կողմից՝ մինչդատական վարույթում անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման նպատակի միջև¹:

Այս առումով, ՀՀ օրենսդրի որդեգրած մոտեցման համաձայն՝ քրեական գործերի քննության ընթացքում հրապարակայնության սկզբունքը կիրառություն է ստանում միայն դատական փուլերի ժամանակ: Մինչդատական վարույթում քրեական հետապնդման մարմնի միջնորդությունների հետ կապված, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ միջնորդությունը քննում է դատավորը միանձնյա, դմփիակ դատական նիստում՝ միջնորդությամբ դիմած պաշտոնատար անձի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ (ՀՀ քր. դատ. օր. 283-րդ հոդվածի առաջին մաս): Նման իրավակարգավորման պարագայում, երբ միջնորդությունների քննությունն իրականացվում է փակ, հասարակական հսկողությունից դուրս, բարձրանում է դատարանի կողմից կամայական որոշումներ կայացնելու հավանականությունը: Այս մոտեցման հակառակորդները, որպես իրենց դիրքորոշման հիմնավորում, նշում են նախաքննության գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը, սակայն կարծում ենք, որ ճկուն մոտեցում դրսևորելու պարագայում նման խնդիր չի առաջանա: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը

¹ Քրեական վարույթի ընթացքում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության համատեքստում նախնական քննության գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության վերաբերյալ որոշակի իրավական դիրքորոշումներ է արտահայտել ՀՀ սահմանադրական դատարանը (տես, ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հունվարի 24-ի ՍԳ-Ռ-1008 որոշումը Քաղաքացի Հասմիկ Հովհաննիսյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասին 9-րդ կետի «նախաքննության ավարտման պահից դրույթի» և 201-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով):

ցույց է տալիս, որ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելիս վարույթն իրականացնող մարմինը բավարարվում է միայն համապատասխան հիմքերի առկայությունը նշելով, առանց դրա հիմքում կոնկրետ ապացույցներ դնելու: Ավելին, նույնիսկ եթե համապատասխան հիմքերի առկայությունը հիմնավորվում է կոնկրետ ապացույցներով, դրանք, որպես կանոն, նախաքննության ընթացքի վրա էական ազդեցություն ունենալ չեն կարող: Սակայն, ամեն դեպքում, դատարանին պետք է իրավունք վերապահել, երբ առկա է օրենքով պահպանվող գաղտնիքը հրապարակելու վտանգ, որոշում կայացնել դռնփակ քննություն անցկացնելու մասին: Նման ընթացակարգն ինքնին դատավորի զգոնությունն ու պատասխանատվությունը բարձրացնող կարևոր երաշխիք է և, եթե անգամ դատարանը որոշում է կայացնում դռնփակ քննություն անցկացնելու մասին, դատարանի որոշումը պետք է հիմնավորված լինի: Մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության վերաբերյալ դատարանի որոշումն, ամեն դեպքում, պետք է հրապարակվի դռնբաց դատական միտում, քանի որ այն չի բովանդակում այնպիսի տվյալներ, որոնք կարող են խախտել նախաքննության գաղտնիությունը¹:

Այսպիսով, վերը շարադրված հայեցակարգային մոտեցումները, հիմքում ունենալով համարձակ նորարարության և չափավոր պահպանողականության հիմնարար չափանիշները, կազմում են համակարգային ամբողջություն և կոչված են ապահովելու աստիճանական անցում քրեական դատավարության զարգացման որակապես նոր փուլ: Այդ մոտեցումները արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ իրողությունները և հենվելով քրեական արդարադատության ոլորտում միջազգային չափանիշների վրա՝ կարծում ենք, կնպաստեն քրեական վարույթի ընթացքում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության ապահովմանը ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական կիրառության ընթացքում:

¹ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական չափանիշների կիրառումը ՀՀ քրեական դատավարությունում / Գ.Ս. Ղազինյան, Ս.Ա. Դիլբանդյան, Հ.Հ. Ղուկասյան, Ա.Ռ. Հարությունյան, Գ.Մ. Մելքոնյան, Ա.Հ. Թաթոյան, Երևան, 2010, 125-127 էջերը: Մինչդատական վարույթում կալանքի կիրառության նկատմամբ հրապարակայնության մասին տես նաև, John M. Olin Center for Law, Economics and Business. Liberty Takings: a Framework for Compensating Pretrial Detainees. Jeffrey Manns. Discussion Paper No. 512. O4/2005. Harvard Law School. Cambridge, MA 02138, 34-37 էջերը:

Gagik Ghazinyan

*Yerevan State University, Dean of the Law Faculty,
Corr. Member of the National Academy of Sciences,
Doctor of Legal Sciences, Professor*

Arman Tatoyan

*Chair of Criminal Procedure and Criminalistics, YSU
Candidate of Legal Sciences, Docent*

**SOME ISSUES OF REGULATION OF THE PRE-TRIAL STAGE
ACCORDING TO THE CONCEPT OF THE NEW CRIMINAL
PROCEDURE CODE OF THE RA**

This analysis is dedicated to a number of pre-trial investigation issues based on the Concept of the new Criminal Procedure Code of the Republic of Armenia.

The paper presents the necessity to develop a new criminal procedure code, as well as some basic conceptual approaches on pre-trial investigation. Particularly, the concept of general and simplified forms of preliminary investigation is analyzed. Furthermore, thorough analysis on the new essence of inquest is presented in the paper. The initiation of criminal prosecution is the other issue discussed further. Pursuant to the concept of the new criminal procedure code, the criminal prosecution initiation is the prosecutor's exclusive function, provided by the Constitution of Armenia. Approval of the investigator's decree by the prosecutor on impleading a person as an accused is the initiation of criminal prosecution, accordingly. The analysis illustrates specificities of relations among prosecutors, investigators and heads of investigative units. Along with this, a new conceptual model of arrest and detention is presented on the basis of relevant international standards and international best practices. Eventually, the paper shows necessity of publicity expansion on examination of criminal prosecution authorities' motions on detention in the course of pre-trial investigation in the Republic of Armenia.